



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱԶԳ. Վ. ԵՒ Ա. ՇԱՄԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՐՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԶԵՌԱՄԲ

Ազգային Վահան եւ Անուշ Շամլեան միջնակարգ վարժարանի աւարտական կարգի աշակերտները Չորեքշաբթի, 20 Մայիսի առաւօտուն, Համբարձման տօնի նախօրեակին, իրենց դաստիարակներուն եւ ծնողածանդակ մարմինի անդամներու ընկերակցութեամբ այցելեցին Ազգ. Առաջնորդարան եւ ընդունուեցան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Ներկայ էր նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քինյ. Աթմաճեան: Աշակերտները Ազգ. Առաջնորդարան եկած էին Ս. Հաղորդութիւն ստանալու եւ Առաջնորդ Սրբազանին հետ մտերմիկ պահ մը ունենալու համար: Անոնք քանի մը շաբաթ ետք պիտի ունենան իրենց ամավերջի հանդեսը, շրջանաւարտ ըլլալով վարժարանէն:

Վարժարանի տնօրէնութիւնը յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով է որ նման նախաձեռնութեան կը դիմէ, ինչ որ այս այցելութիւնը կը վերածէ գեղեցիկ աւանդութեան մը:

Աշակերտներն ու դաստիարակները առաջին հերթին համախմբուեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ, ուր միասնաբար արտասանեցին Տէրունական Աղօթքը, ապա Չղջումը արտասանեցին Տէր Հօր հետ, Առաջնորդ Սրբազանէն թողութիւն ստանալով իրենց մեղքերուն համար:

Նախաճաշի պահէն ու խմբովին լուսանկարուելէ ետք, աշակերտները ուղղուեցան «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահը: Վարժարանի փոխ տնօրէնուհին՝ Տիկին Ռիթա Գաբրիէլեան, շնորհակալութեան խօսք ուղղեց այս ընդունելութեան համար եւ աւելցուց, որ աւարտական կարգի աշակերտները յուշանուէր մը բերած են Առաջնորդ Սրբազանին: Յուշանուէրը՝ Հայաստանի Ծաղկածոր շրջանի պատմական Կեջարիս վանքին պատկերն էր: Ապա, աշակերտներ արտասանութեամբ ու նուագով այլ անակնկալներ հրամցուցին:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքի արտայայտութիւններով ողջունեց աշակերտներն ու դաստիարակները: Ան անդրադարձաւ այն իրողութեան, որ շրջանաւարտ կարգի աշակերտներու Ազգ. Առաջնորդարան այցելութիւնը տեղի կ'ունենայ անոնց Հայաստան

այցելութենէն ետք, երբ հայրենի հողին, ջուրին ու օդին սնունդով տոգորուած՝ անոնք աւելի եւս հայացած են, իբրեւ լրում՝ վարժարանի յարկին տակ իրենց ստացած ուսման ու հայեցի դաստիարակութեան: Առաջնորդ Սրբազանը յորդորեց աշակերտները, որ այս ոգին ու մեր ժողովուրդին հետ կապը ամուր պահեն յառաջիկայ տարիներուն, ո՛ր որ ալ ըլլան, ի՛նչ միաջավայրի մէջ ալ որ գտնուին ու ի՛նչ ասպարէզ ալ որ որդեգրեն: Վերջապէս, ան ողջոյնի խօսք ուղղեց վարժարանի Տնօրէնին՝ Տիարը Վազգէն Մատենլեանի ու անձնակազմին, գնահատելով հաստատուած այս աւանդութիւնը:

Հանդիպումը վերջ գտաւ «Մեր Հայրենիք» քայլերգին խմբերգումով:

CHAMLIAN SCHOOL GRADUATING CLASS RECEIVES HOLY COMMUNION AT THE PRELACY CHAPEL

On the morning of Wednesday, May 20th, 2009, and the eve of the Feast of the Ascension of our Lord Jesus Christ, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the graduating class of Vahan and Anoush Chamlian School. The students were accompanied by their teachers and Parent Teacher Committee members. Pastor of St. Mary's Church Rev. Fr. Vazken Atmajian was also in attendance.

It has become a tradition for the graduating class to come to the Prelacy and receive Holy Communion by the Prelate prior to their graduation.

Upon their arrival, the students and teachers gathered at the St. Dertad and St. Ashkhen Chapel where they recited the Lord's Prayer then received Holy Communion.

After breakfast, the students and teachers headed to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. Vice-Principal Mrs. Rita Kaprielian thanked the Prelate for the warm reception and announced that the students had a memento to present, a framed portrait of the Kecharis Monastery of Vanadzor. The students then presented an artistic program consisting of songs and poetry.

In his address to the students, the Prelate urged them to keep the Armenian spirit alive and strong in them wherever they may find themselves in the coming years.

The gathering came to a close with the singing of the Armenian national anthem.